

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ N65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Հայոց լեզու
Մասնակից՝ Արմաշի միջնակարգ դպրոց, Շահվերդյան Լարիսա
Թեմա՝ Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում
/ըստ Սեւակի բանաստեղծական խոսքի/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
2. ԲԱՅԱՆՈՒՆ ԳՈՅԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ	9
3. ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ ՊԱՐԶ ԲԱՅԱՆՈՒՆՆԵՐ	10
4. ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՅԱՆՈՒՆՆԵՐ	14
5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	18
6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բայանունները կարելուք տեղ են գրավում գոյականների շարքում իրենց իմաստային եւ քերականական առանձնահատկությունների շնորհիվ: Դա պայմանավորված է բայի հետ ունեցած ծագումնային կապով:

Հայ լեզվաբանները ուսումնասիրել են այդ կապը եւ արել են շատ ուշագրավ դիտողություններ: Դրանք տարբեր են, երբեմն իրար լրացնող: Որոշ լեզվաբաններ բայանուն են համարում միայն գործողության անուն բայանունները, իսկ մյուսներն էլ՝ բայիմաստ պարունակողները:

Բայանունները կարելի է խմբավորել գործողության անունների, գործող անձի, գործողության միջոց կամ գործիքի եւ գործողության արդյունքի եւ հետեւանքի:

Բայանունները լայն կիրառություն ունեն: Դրանք շատ գործածական են թե՛ բանաստեղծական խոսքում, թե՛ առօրյայում:

Պարույր Մեւակի ստեղծագործություններից ընտրելով համապատասխան օրինակներ՝ փորձել ենք ցույց տալ դրանց լայն կիրառությունը գրականության էջերում: Միաժամանակ տեսանելի են միջառարկայական եւ ներառարկայական կապերը, քանի որ քննության են ենթարկվում բայանունները լեզվի տարբեր մակադասակներում:

Բայանուն գոյականն ունի տարբեր ըմբռնումներ: Որոշ լեզվաբաններ բայանուն են համարում միայն գործողության անուն բայանունները, որոշ լեզվաբաններ էլ նկատի ունեն եւ սրանք, եւ բայի իմաստի հետ անմիջականորեն չկապված գոյականները, որոնք բայիմաստ են պարունակում:

Լ. Մաքսուդյանը իր «Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում, աշխատության մեջ այսպես է բնութագրում բայանունները»: Քանի որ գործողությունն ընդհանրապես ունի կատարող, ինչպես նաեւ՝ գործողության միջոց, գործիք, առարկա, իսկ գործողության կատարողը, կատարման միջոցը եւ հետեւանքը հաճախ արտահայտում են բայի հետ նույնահիմք կամ բայից ածանցված գոյականներով, որոնք գործողության անուն գոյականների հետ միասին դիտվում են իբրեւ բայանուններ»¹:

Բայանունները կարելի է բաժանել հետեւյալ իմաստային խմբերի.

1. Գործողության անուն գոյականներ
2. Գործող անձ ցույց տվող գոյականներ
3. Գործողության միջոց կամ գործիք ցույց տվող գոյականներ
4. Գործողության արդյունք կամ հետեւանք ցույց տվող գոյականներ

Մ. Արեղյանը բայանուն է համարում անորոշ դերբայը. « Անորոշ դերբայը իբրեւ բայանուն ցույց է տալիս բայիմաստ առանց դեմք եւ դեմքի թիվ, եղանակ կամ ժամանակ որոշելու: Օրինակ՝ գնալ, ասել, գրել, կարդալ»²: Իհարկե, անորոշ դերբային հատուկ են սեռի, ինդրատության հատկանիշները: Սրա հետ մեկտեղ անորոշ դերբայն իր մեջ ներառում է նաեւ գոյականի հատկանիշներ: Անորոշ դերբայն ու բայանուն գոյականը երբեք չեն նույնանում իրենց արժեքով եւ խոսքիմաստային պատկանելիությամբ: Ա. Աբրահամյանը, խոսելով բայանուն գոյականի եւ անորոշ դերբայի տարբերությունների մասին, գրում է.

-
1. Լ. Մաքսուդյան, բայանուն գոյականը ժամանակակից հայերենում, Երևան 1984, էջ 1
 2. Մ. Արեղյան, աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 100

«Առաջին խմբի բայիմաստը դրսևորում է իբրև առարկա. այստեղ գործ ունենք գործողության առարկայացման հետ:

Մինչդեռ երկրորդ խումբ բայիմաստն արդահայտում է որպես գործողություն, եւ, բնական է, որ այդ խմբի մեջ մտնող յուրաքանչյուր բառ ունի այնպիսի հատկանիշներ, որպիսիք ունենում են բայը չթեքված /չխոնարհված/ վիճակում, ուստի եւ դրանք բայեր են»¹: Այնուհետեւ զարգացնելով նույն միտքը՝ Ա. Աբրահամյանը գրում է. « Իհարկե, անորոշ դերբայը եւս կարող է արտահայտել գործողությունը առարկայացված վիճակում, սակայն այն միայն ժամանակավորապես գոյականի դեր է կատարում, իր էությանբ, խոսքիմասային առանձնահատկությամբ այդպիսին չէ, ինչպես նշում են որոշ քերականներ / Այտնյան, Պալասանյան, Աբեղյան /»²: Իսկ Մ. Ասատրյանը, անդրադառնալով այս նույն հարցին, գրում է. « Անորոշ դերբայը իր մեջ համատեղում է բայի եւ գոյական անվան հատկանիշներ: Անորոշ դերբայը բայ է այնքանով, որ արտահայտում է գործողության, ընթացքի գաղափար, որն իր քերականական, նյութական դրսևորումն է ստանում բայասեռի եւ դրանից բխող խնդրառության կարգերում: Անորոշ դերբայը միաժամանակ գոյական է այնքանով, որ որպես գործողության անուն իր իմաստով հավասարվում է բայանուններին՝ արտահայտելով նաեւ առարկայական գաղափար, որն իր քերականական նյութական դրսևորումն է ստանում հոլովի կարգում»³:

Այսպիսով, անորոշ դերբային հատուկ են եւ բայի, եւ գոյականի համար բնորոշ քերականական կարգեր: Բայց այդ հատկանիշը մեզ հնարավորություն չի ընձեռում անորոշ դերբայը բայանուն անվանելու: Բացի անորոշ դերբայից, իրենց հատկանիշներով գոյականին են մոտենում նաեւ ենթակայական եւ համակատար դերբայները. « Անորոշը որպես գործողության անուն, ենթակայականը որպես գործողի անուն , իսկ ապառնի երկրորդը որպես գործողության ենթակա կրող լինելու ընդհանուր առարկայական նշանակություն ունեցող բառեր:

-
1. Ա. Ա. Աբրահամյան, «Հայերենի դերբայները եւ նրանց ձևաբանական նշանակությունը», Երևան, 1953, էջ 51
 2. Տես նույն տեղը
 3. Մ. Ասատրյան, « Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր», Երևան, 1979, էջ 234

Մակայն հեռանում են գոյականներից սեռով եւ խնդրառությամբ»¹ :

Գործողության անուն բայանունները անվանում են գործողությունը, ինչպես անորոշ դերբայը: Ուստի անորոշ դերբայն ու գործողության անուն բայանուններն ունեն որոշ ընդհանրություններ: Անորոշ դերբայի արտահայտած գործողության կատարողն ու կրողը հանդես են գալիս իբրեւ կողմնակի ենթակա ու կողմնակի խնդիր: Այս նույն խնդրառական առանձնահատկություններն ունեն նաեւ գործողության անուն գոյականները, բայց այստեղ արդեն ուղղական – հայցական հոլովի փոխարեն հանդես է գալիս ենթակայական կամ առարկայական սեռականը:

Գործողի անուն, գործող անձ ցույց տվող գոյականները մատնանշում են այդ գործողությունը կատարողին: Օրինակ՝

Ասես մի ջերմեռանդ **կրակապաշտ**՝
Ես քո լույսին էի միշտ կարկառվում...²

Ես **գյուտարարն** էի քո այն գեղեցկության,
Որ միգուցե չկար ինձնից առաջ
Եվ չլինի գուցե ինձնից հետո:
/Էջ 376, հատոր 2/

Դառնամ փառաբանեմ **ձկնորսներին** ծովում՝
Փոթորկի թունդ պահին
Մերմնացանին՝ արտում, երբ էլ չի սպասում
Նա տաք օրեր:
/Էջ 378. հատոր 1/

1 Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, էջ 108, /էջ 381, հ. 2/

2 Այս եւ մյուս օրինակները բերված են Պ. Մեւակի բանաստեղծական խոսքից /Երկերի ժողովածու 3 հատորով, 1982, 1983, 1,2 հատորներ /

Այս օրինակներում **կրակապաշտ, գյուտարար, ձկնորս, սերմնացան** գոյականները հարաբերակից են նույն հիմքից կազմված ենթակայական դերբային եւ ցույց են տալիս այն անձը, որը կատարում է տվյալ գործողությունը: Սակայն չի կարելի հավասարության նշան դնել գործող անձ ցույց տվող բայանվան եւ ենթակայական դերբայի միջեւ: Դրանք իրարից տարբերվում են քերականորեն: Ենթակայական դերբային հատուկ է անցողականության եւ անանցողականության քերականական կարգը, որը հատուկ չէ գործող անձ ցույց տվող գոյականներին: Անցողական բայահիմքերից կազմված ենթակայական դերբայներն ունեն ուղիղ խնդրի հետ կապակցվելու շարահյուսական հատկություն: Կարծես թե կարելի է հավասարություն դնել փրկիչ եւ փրկող ձեւերի միջեւ, բայց դրանք տարբեր են քերականորեն, առաջինը ուղիղ խնդիր պահանջել չի կարող, իսկ երկրորդը կարող է: **Օրինակ՝ իմ փրկիչը դու ես եւ ինձ փրկողը դու ես** կառուցվացքները 1:

Գործողի անուն գոյականներն իրենց իմաստով ավելի թանձրացական են, քան նույնահիմք բայի ենթակայական դերբայը: Սակայն պակաս թանձրացական են, քան անձ ցույց տվող սովորական գոյականները:

Գործողության միջոց, գործիք ցույց տվող գոյականները անվանում են այն առարկան, գործիքը, որի միջոցով կատարվում է գործողությունը: Գործիքի անուն գոյականները հարաբերակից են նույնահիմք բայի ենթակայական դերբային, ինչպես գործող անձ ցույց տվող գոյականները: Այս գոյականների իմաստը թանձրացական է, քանի որ ցույց են տալիս կոնկրետ առարկա, սակայն սովորական թանձրացական գոյականներից դրանք տարբերվում են իմաստով պակաս թանձրացական լինելով:

Շարժիչ, փական գոյականները թեւ որոշակի առարկաներ են ցույց տալիս, բայց պահանջում են նրանց իմաստը թանձրացականացնող լրացական բառեր՝ **ինչի շարժիչ, ինչի փական:**

1. Գ. Սեւակ «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», Երեւան 1955, էջ 237

Մրանց լրացումները բխում են այդ բառերի գործողության իմաստի հետ ունեցած հեռավոր կապից 1:

Գործողության միջոց ցույց տվող գոյականներից են՝ **արդուկ, շշակ, զանգ** եւ այլն:

Թե արդուկելն անխուսափ է՝

Ահա շորը – սիրտ մի հանձնեք

տաք արդուկին

/Էջ 375, հատոր 1/

Ինձ հետ, կմոռանամ – դու երջանիկ էիր

Ավելի, քան գուցե

դադձը՝ առվի ափին,

ցլի վզին՝ **զանգը**

ջրհորի մեջ՝ աստղը:

/Էջ 378, հատոր 2/

Եվ այս սերը կոչվածը գուցե սեր չէ բնավ,

Այլ **շշակի** ձայն է, կայարանի աղմուկ,

Եվ կանացի ձեռք է՝ ճյուղի նման ջարդված...

/Էջ 269, հատոր 1/

Գործողության արդյունք կամ հետեւանք ցույց տվող գոյականներն արտահայտում են հույնահիմք բայի գործողության կատարման հետեւանքով ստացված առարկան կամ դրությունը, վիճակն ընդհանուր կերպով: Այն գոյականները, որոնք ցույց են տալիս առարկա, իբրեւ գործողության արդյունք, թանձրացական են, իսկ այն գոյականները, որոնք ցույց են տալիս առարկա, իբրեւ գործողության հետեւանք, վերացական են: Այս սահմանազատումը բացարձակ ճշգրիտ լինել չի կարող, 16քանի որ միեւնույն բառը կարող է համատեղել եւ՝ գործողության արդյունքի, եւ՝ հետեւանքի, եւ՝ հենց գործողության իմաստի:

1. Տես Լ. Մաքսուդյան, բայանուն գոյականը ժամանակակից հայերենում, Երեւան 1984, էջ

ԲԱՅԱՆՈՒՆ ԳՈՅԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանրապես բառը բառակազմական միավորների օրինաչափ, հաջորդական միացում է: Բառի մեջ մտնող բաղադրիչները հենց այնպես չեն բաղադրվում: Երբ բառը ենթարկում ենք բառակազմական վերլուծության, մեզ համար կարևոր նշանակություն ունի բաղադրող հիմքի քերականական բնութագիրը, հիմնականում՝ խոսքիմասային պատկանելությունը: Չնայած **հարթում**, **հարթիչ** բայանունների բաղադրող հիմքը ինքնուրույն բառ է՝ ածականի արժեքով, բայց տվյալ դեպքում այն հարթել բայի բայահիմքն է:

Երբ խոսում ենք նույն արմատից կազմված բայանվան եւ բայի մասին, ինչպես՝ **գիր-գրել**, **երգ-երգել**, հարց է ծագում, թե սրանցից որն է վաղ ձևավորվել: Այս հարցին լեզվաբանները տվել են տարբեր պատասխաններ: Մեզ համոզիչ է թվում Ա. Աբրահամյանի տեսակետը. « Ամենից հավանականն ու ընդունելին այն է, որ նախապես գոյականն ու բայը հանդես են եկել միասնաբար եւ ապա մարդու լեզվամտածողական ունակությունների ու գիտակցության զարգացման հետեւանքով լեզվի մեջ տարրորոշվել են եւ ձևավորվել որպես առանձին խոսքի մասեր՝ գոյական եւ բայ՝ առանձին-առանձին» 1:

Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, բաղադրող հիմքերի քերականական բնութագիրը հատկապես կարևոր է քերականական համանունություն ունեցող ածանցների դեպքում: Նման դեպքերում համանունությունը պարզվում է բաղադրող հիմքի քերականական բնութագրից, երբեմն էլ՝ շարահյուսական մակարդակում:

Բաղադրող հիմքը կարող է լինել պարզ եւ բաղադրյալ:

1. Ա.Ա. Աբրահամյան, «Բայը ժամանակակից հայերենում, հատոր 1, Երևան 1962, էջ 37

ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ ՊԱՐԶ ԲԱՅԱՆՈՒՆՆԵՐ

Այս բայանունները համընկնում են նույնահիմք բայի արմատին կամ կազմվում են նույնահիմք բայից: Կան այնպիսի բայանուններ, որոնք ստուգաբանորեն բարդ կամ ածանցավոր բայանուններ են, բայց այժմ գիտակցվում են որպես պարզ: «Յուրաքանչյուր պարզ բայանուն ունի իրեն զուգահեռ նույնահիմք բայը. եթե տվյալ կազմությամբ վերացական գոյականը չունի իրեն զուգահեռ բայաձևեր, ապա նա բայանուն չէ, ինչպես՝ երաշտ, առիթ, արար, ոճիր, համ» 1:

Բայանուն չեն կարող համարվել նաև մի շարք թանձրացական գոյականներ, որոնք ունեն նույնահիմք բայ՝ **ջուր-ջրել, յուղ-յուղել, արյուն-արյունել:**

Պարզ բայանունները արտահայտում են գործողության անուն, գործող անձ, գործողության միջոց, գործիք, գործողության արդյունք կամ հետեւանք: Գործողության անուն բայանուններից են՝ **երագ, կարոտ, երգ, փորձ, խաղ, պատասխան** եւ այլն:

Քո ականջը՝

Մեղեդու դեմ դռնբաց,

Աղմուկի դեմ՝ միշտ կայուն...

/Էջ 58, հատոր 1/

1. Լ. Մաքսուդյան, «Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում», Երևան 1984, էջ

Այս աչքերը՝

Պոռթկուն **երազ**, դժվար **կարոտ**,

Ծանր էլք,

Մորմոքուն վերք,

Ծովացած խելք,

Ծորուն **երգ**... /Էջ 57, հատոր 1/

Զուր մի ասա, թե դու

Բոլորովին անփորձ աղջիկ էիր այնժամ,-

Սերը, ոչ չի զգում **փորձի** կարիք:

/Էջ 332, հատոր 2/

...Ու ես թափառում եմ այգիներում,

Որ վերստին լսեմ զանգ ծիծաղը նրանց,

Տեսնեմ ինքնամոռաց -տարված **խաղը** նրանց:

Զե, սիրելիդ իմ,

Շատ է հնացել քո **պատասխանը**:

/Էջ 365, հատոր 1/

Ընդգծված բայանունները անվանում են գործողություն: Սրանք կարող են փոխարինվել նույնահիմք անորոշ դերբայով կամ գրավել նրա տեղը՝ առանց խախտելու բառակապակցության իմաստը եւ բաղադրիչների միջեւ եղած քերականական հարաբերությունը:

Գործող անձ ցույց տվող պարզ բայանունները անվանում են իրենց բայիմաստով արտահայտված գործողությունը կատարողին: Օրնակ՝

Ինձ մոտ մանուկների տիրություն է.

Ինչքան ինձ հիշում եմ՝

Հպատակն եմ նրանց:

/Էջ 341, հատոր 2/

Եվ մի օր էլ չեմ համբերում.

-Գիտեմ, գիտեմ,

Գուշակ էլ ես, **կախարդ** էլ ես,

Չէ որ դու ինձ ոտով-գլխով կախարդել ես:

/Էջ 370, հատոր 1/

Ես հոգնել եմ մանրաքանդակ պաղ խոսքերից:

Լավ է լինել հմուտ **դարբին**, քան **ոսկերիչ**...

/Էջ 372, հատոր 1/

Գործող անձ ցույց տվող պարզ բայանունների մի մասը մատնանշում է գործողության ակտիվ կատարողին, իսկ մյուսները՝ կրավորական գործողության ենթակային: Վերը նշված օրինակներում գուշակը գուշակողն է, կախարդը՝ կախարդողը, դարբինը՝ դարբնողը, իսկ հպատակը հպատակվողն է:

Գործողության միջոց կամ գործիք ցույց տվող պարզ բայանունները անվանում են այն առարկաները, որոնց միջոցով կատարվում է գործողությունը: Իրենց իմաստով նյութական են, որովհետև անվանում են թանձրացական առարկաներ: Օրինակ՝

Ոչ մի **արդուկ** կյանքում չի հարթեցնում կնճիռ:

/Էջ 379, հատոր 2/

Գործողության արդյունք կամ հետեւանք ցույց տվող պարզ բայանունները եւս իրենց արտահայտած իմաստով լինում են թանձրացական եւ վերացական: Գործողության արդյունք, առարկա նշանակելու դեպքում թանձրացական իմաստ են ունենում, իսկ վիճակ, երեւոյթ նշանակելու դեպքում՝ վերացական: Առաջին խմբի բայանունները են՝ **պատկեր, քանդակ, նախշ, փունջ**, երկրորդ խմբի բայանունները են **թախիձ, գրգիռ, կոչ, մրմունջ, որոտ, սարսափ** եւ այլն:

Նույն բայանունը երբեմն կաորդ է արտահայտել է՛լ գործողության անուն բայնվան իմաստ, է՛ւ գործողության հետեւանք բայնվան իմաստ: Օրնակ՝ **կարոտ** գոյականը նշանակում է է՛լ **կարոտելը**, է՛ւ **կարոտելու** հետեւանքով առաջացած զգացումը: Նկատելի է, որ այս իմաստների համատեղումը զգալի է գործողության հետեւանք՝ վիճակ, երեւոյթ արտահայտող բայանուններում: Օրինակ՝

Ես ծնվել եմ նրա համար,

Որ մոր սրտում **կարոտ** դառնամ...

/Էջ 384, հատոր 1/

Ես իմ մթին-մթին կարոտն այնպես գիտեմ,

Ինչպես կույրը գիտի բնակարանն իր հին...

/Էջ 291, հատոր 1/

ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՅԱՆՈՒՆՆԵՐ

Նախաձանցավոր ձեւերը նորակազմություններ չեն տալիս, բայց չի բացառվում: Ընդհանրապես հայերենի բառակազմության մեջ, մասնավորապես գոյականների կազմության մեջ, չնչին է նախաձանցների խաղացած դերը՝ համեմատած վերջաձանցների հետ:

Նախաձանցավոր շատ բայանուններ, չնայած իրենց կազմում ունեն անց, բայց դրանք համարյա չեն ընկալվում եւ իրենց կազմությամբ նմանվում են պարզ բայանուններին: Օրինակ՝ **վերադարձ, վերհուշ, ներգաղթ, փոխայց** եւ այլն:

Կազմությամբ բարդ բայանունների կաղապարն է գոյական + բայարմատ կամ բայահիմք: Այս բաղադրիչների միջեւ գոյություն ունի լրացական հարաբերություն: Գոյականները, բաղադրվելով բայարմատին կամ բայահիմքին, կազմում են գոյականներ: Առաջին բաղադրիչը՝ գոյականը, դառնում է լրացում երկրորդ բաղադրիչի՝ բայի համար: Հաճախ այս կարգի բարդություններում հանդես է գալիս անանցանքի որպես առաջին բաղադրիչ: Այս դեպքում արդեն բառակապակցությունը ձեռք է բերում անանցանքի արժեք: Այս կազմությունը խիստ կենսունակ է արդի հայերենում: Գոյական + բայարմատ բաղադրությունները արտահայտում են նաեւ գործողության անվան՝ բայանվան նշանակություն: Օրինակ՝

Իմ շրթունքներից

Կախված է հիմա մի ամբողջ աշխարհ՝

Մի գունդուկծիկ,

Բառերի մի պարս,

Որ իր բզզոցով **գլխապտույտ** է հարուցում իմ մեջ:

/Էջ 259, հատոր 1/

Օ, Սուլամիթա,

Այդպես ամաչկոտ շուռ մի եկ ինձնից,

Բայց շիկնիր, շիկնիր,

Որ իմ նեղ խցում

Արեւածագի պատրանքն զգամ ես:

/Էջ 362, հատոր 2/

Եվ մահն եմ ատում,

Թե հյուր է գալիս **աղջըկատեսին...**

/Էջ 402, հատոր 1/

«Մրանք հիմնականում որեւէ երեւոյթ, իրողություն անվանող վերացական գոյականներ են եւ համեմատաբար ավելի քիչ են գործածական, քան գոյականներով կամ ածականներով ու բայարմատ կամ բայահիմք գերադաս անդամով բաղադրված մյուս խմբի /գործողի անվան, գործողության իբրեւ հատկանիշ արտահայտող/ բարդությունները 1:

Գործողության անվան իմաստ արտահայտող բարդությունները շարահյուսական կապակցությունների վերածելիս կարող են արտահայտել զանազան շարահյուսական հարաբերություններ՝ խնդրային, պարագայական, ենթակայի: Սակավ դեպքերում կարող են արտահայտել ստորոգյալի եւ մակբայով արտահայտված պարագայի հարաբերություն: Օրինակ՝ **մենամարտ, առաջընթաց**: Գոյական + բայարմատ կամ բայահիմք բաղադրությունը կարող է ունենալ ածականի արժեք, օրինակ՝ **խելքահան, սրտամաշ. հոգեհան**:

1.Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 1979, էջ 334

Նկատելի է, որ բայական բաղադրիչները արտահայտում են ենթակայական դերբայի իմաստ՝ **խելքից հանող, սիրտ մաշող, հոգի հանող**:

Ինչպես պարզ բայանունները, բարդ բայանունները եւս իմաստի տեսակետից լինում են գործողության անուն, գործող անձի անուն, գործողության միջոցի եւ գործիքի, գործողության հետեւանքի անուն բայանուններ:

Գործողության անուն բայանունները արտահայտում են ենթակայի եւ ստորոգյալի հարաբերություն, դրանց երկրորդ բաղադրիչը արտահայտում է անորոշ դերբայի իմաստ, իսկ առաջին բաղադրիչը նրա ենթական է՝ **այգաբաց, ձնհալ, գլխասպտույտ**, այլ դեպքերում կարող են արտահայտել ստորոգյալի եւ անուղղակի խնդիրների ու պարագաների հարաբերություն՝ **ձեռնամարտ, աշնանացան, թղթախաղ** եւ այլն:

Գործողության անուն բարդ բայանունները իրենց իմաստով ավելի թանձրացական են, քան գործողության անուն պարզ բայանունները, որովհետեւ առաջինների կազմության մեջ գոյական բաղադրիչը թանձրացականացնում է բառիմաստը:

Գործող անձ ցույց տվող բարդ բայանունների երկրորդ բաղադրիչը հավասար արժեք է ենթակայական դերբային, իսկ առաջին բաղադրիչը նրա կրող խնդիրն է: Օրինակ՝ **առակազիր, բեռնակիր, հացթուխ, ջրկիր** եւ այլն: Այս բառերը իմաստով առարկայացել են եւ միայն կառուցվածքային վերլուծության շնորհիվ դասվում են բայանունների շարքը:

Գործողության միջոց կամ գործիք հանդիսացող բարդ բայանունները նշում են գործողությունը կատարող առարկան: կառուցվածքով նման են գործող անձ ցույց տվող բայանուններին: Սրանց երկրորդ բաղադրիչը եւս հավասարազոր է ենթակայական դերբային կամ **իչ** ածանցով գործիքի իմաստ արտահայտող գոյականին: Օրինակ՝

...Ես շարժվում եմ այնտեղ,

Ապրում այնտեղ,
Գուցե այն ինքնավար **ժամացույցի** նման...

/Էջ 291, հատոր 1/

...Ինչպես թուղթն է հոգնել իմ ջանքերից՝
Հեռվից հեռու ասել քեզ երկու բառ,
Որ կարող է նույնքան ինձ թարգմանել,
Որքան թարգմանում է **ինքնաթիռին** հավը...

/Էջ 272, հատոր 2/

Այս բառն ինձ դարձրել կշեռք
Եվ ուզում է իր ճիշտ քաշն իմանալ: Սակայն
Իմ իսեղճ **թվացույցին** այդքան թվեր չկան...

/Էջ 268, հատոր 2/

Շատ է շատացել աղմուկն աշխարհում,
Շատացել այնքան,
Որ լռությունը բարկացել է խիստ,
Եվ դրանից է սնդիկը ելնում **ջերմաչափն** ի վեր...

/Էջ 190, հատոր 1/

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով գեղարվեստական խոսքում լայն կիրառություն ունեն բայանունները: Կարելոր է խոսքային փոքր ծավալի մեջ մեծ բովանդակություն դնելը: Այստեղից բխում է դիմավոր բայի սահմանափակ կիրառությունը, որին փոխարինում է գործողությունների առարկայացումը: Սա շարունակ տարածում ստացող առանձնահատկություն է, որն իր հետ բերում է բայանվան կիրառության հաճախականություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1 Աբրահամյան Ա. Ա., Հայերենի դերբայները եւ նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան 1953
- 2 Աբրահամյան Ա.Ա. Բայը ժամանակակից հայերենում, Երևան 1962
- 3 Աբեղյան Մ., Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ 1906
- 4 Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր Ա, Բ, Երևան 1970, 1973
- 5 Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1979
- 6 Մաքսուդյան Լ., Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում, Երևան 1984
- 7 Սեւակ Պ. Երկերի ժողովածու երեք հատորով, Երևան 1982, 1983, հատոր 1,2

